ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն**- Արեն Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**- ՀՀ Լոռու մարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**- ՉԺՀ Հուբեյ նահանգի Յինչանգ քաղաք

4. **Հրավիրող կողմը**- «ԱՍԵԴԼ» ՍՊԸ

5. **Գործուղման նպատակները**- Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հուբեյ նահանգի Յինչանգ քաղաք կատարած գործուղման նպատակն էր մասնակցել «ԱՍԵԴԼ» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի տրանսպորտային ցանցի արդիականացման և ուղևորափոխադրումների որակի բարելավման նպատակով ՀՀ Կառավարության դոտացիաների ձևաչափով աջակցությամբ 4 մլն 700 հզ. ԱՄՆ դոլար արժողությամբ ձեռք բերված 45 ավտոբուսների պաշտոնական հանձնման և ընդունման արարողությանը, այցելել Dongfeng ընկերության ավտոմոբիլների արտադրության գործարան, ծանոթանալ ընկերության արտադրական հնարավորություններին, կիրառվող տեխնոլոգիաներին և ավտոբուսների արտադրության գործընթացին, ինչպես նաև ամրապնդել գործարար կապերն ու նախադրյալներ ստեղծել հայ-չինական տնտեսական և գործնական համագործակցության հետագա զարգացման համար:

6. **Քննարկված թեմաները**- Լոռու մարզի հանրային տրանսպորտի համակարգի արդիականացման և ուղևորափոխադրումների որակի բարելավման հեռանկարները, մարզի կարիքներին համապատասխան ավտոբուսների ձեռքբերման, մատակարարման և շահագործման հետ կապված հարցերը, ավտոբուսների տեխնիկական բնութագրերը, շահագործման առանձնահատկությունները և սպասարկման հնարավորությունները, տրանսպորտային միջոցների արդյունավետ և երկարաժամկետ շահագործման ապահովման, տեխնիկական սպասարկման և պահեստամասերի հասանելիության հարցերը, Չինաստանի ավտոմոբիլաշինության ոլորտի առաջատար ընկերությունների փորձի ուսումնասիրության և այդ փորձը Լոռու մարզում կիրառելու հնարավորությունները, Հայաստանի և Չինաստանի միջև գործարար կապերի ընդլայնման և փոխշահավետ համագործակցության զարգացման հեռանկարները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**- Գործուղման շրջանակում տեղի է ունեցել այց Dongfeng ընկերության ավտոմոբիլների արտադրության գործարան, որի ընթացքում հնարավորություն է ընձեռվել

ծանոթանալու ընկերության արտադրական գործունեությանը, ավտոբուսների արտադրության գործընթացին, տեխնիկական հնարավորություններին և արտադրանքի առանձնահատկություններին: Այցի կարևորագույն միջոցառումը «ԱՍԵԴԼ» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի տրանսպորտային համակարգի արդիականացման նպատակով ձեռք բերված ավտոբուսների պաշտոնական հանձնման և ընդունման արարողությունն էր: Միջոցառման շրջանակում կարևորվել է ձեռք բերված ավտոբուսների նշանակությունը մարզի տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման, ուղևորափոխադրումների մատչելիության և սպասարկման որակի բարձրացման գործում: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել նաև հայ-չինական գործարար համագործակցության զարգացմանը, չինական արտադրական փորձի կիրառման հնարավորություններին և հետագա համագործակցության հեռանկարներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները , պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը-

Գործուղման շրջանակում իրականացվել է Լոռու մարզի տրանսպորտային ցանցի արդիականացման նպատակով ձեռք բերված ավտոբուսների պաշտոնական հանձնման և ընդունման գործընթացը: Այցի ընթացքում կարևորվել է ձեռք բերված ավտոբուսների նպատակային շահագործման, դրանց տեխնիկական պատշաճ վիճակի պահպանման և մարզի բնակչությանը մատուցվող տրանսպորտային ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը ժամկետները, պատասխանները, ակնկալվող արդյունքները

Գործուղման արդյունքներով առաջարկվում է՝

1. Ապահովել ձեռք բերված ավտոբուսների արդյունավետ և նպատակային շահագործումը՝ դրանք ներգրավելով Լոռու մարզի Վանաձոր համայնքի տրանսպորտային սպասարկման գործընթացում:
2. Համագործակցելով համապատասխան կազմակերպությունների և շահագործող կառույցների հետ՝ ապահովել ավտոբուսների տեխնիկական սպասարկման, անհրաժեշտ պահեստամասերի հասանելիության և շահագործման ընթացքում առաջացող խնդիրների օպերատիվ լուծման մեխանիզմները:
3. Ուսումնասիրել Dongfeng ընկերության արտադրական և տեխնիկական փորձը, ինչպես նաև ավտոբուսների շահագործման առանձնահատկությունները՝ մարզի տրանսպորտային համակարգի հետագա զարգացման և արդիականացման ծրագրերում դրանք կիրառելու նպատակով:

4. Շարունակել համագործակցությունը «ԱՍԵԴԼ» ՍՊԸ-ի և չինական գործընկերների հետ՝ դիտարկելով տրանսպորտի, ենթակառուցվածքների և հարակից ոլորտներում նոր համագործակցային նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը- 11. 11. 2026թ.